

ՎԱԳՐԱՆԿԱՆ ԵՐՈՒԾ ԶԲՐԻԿԵՏՈՑՎԱԾ ՏԱՇԵՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՆԱՀԱՏՈՒՄԸ

Ա. ԱԿՈՒՑԱՆ ԻՔՃԵՆԵՐ

Մեքենաշինական գործարանների ձուլման ցեխերում մեծ ուշադրություն է հատկացվում մետաղե տաշեղի օգտագործման հարցին՝ հալեցվող մետաղի նվազագույն ծախսումները և կորուստները տրակական բարձր մակարդակի վրա ապահովելու միջոցով:


Սակայն պետք է նշել, որ ներկայումս մեխանիկական գործարանների ձուլման ցեխերում ամբիջականորեն օգտագործվող տաշեղի քանակը ամենևին էլ բավարար չէ: Արտադրական պրակտիկայում վազրանկայում տաշեղի օգտագործման բոլոր ձևերն ու եղանակները հիմնականում առաջ են բերում ձուլանվազման մեծության փոքրացում և հանգում են վազրանկայում մետաղե տաշեղի վերահալման երկու եղանակների՝ բարձր խտության բրիկետների ձևով և չբրիկետացված տաշեղը դեպի վառարանի հալեցման գոտին պնեմատիկ կամ մեխանիկական ձևով մատուցելու միջոցով:

Տեխնիկա-տնտեսական տեսակետից տաշեղի վերահալման ամենաէֆեկտիվ միջոցը հանդիսանում է այն, որը մետաղի նվազագույն օքսիդացման և ձուլանվազման, կոքսի ծախսման ցածր տոկոսի, վազրանկայի բարձր արտադրողականության դեպքում, առանց լրացուցիչ տարածությունների և կապիտալ ներդրումների ներգրավման, ապահովում է հալման ազդեցատի աշխատանքի նորմալ ռեժիմը և ստացվող մետաղի բարձր որակը:

I. Քառձր խտությամբ բրիկետներն ձևով տաշեղի վերահալման եղանակ: Վերահալման ժամանակ վազրանկայի աշխատանքի ձուլանվազման և վերահալման որակի վրա ազդող հիմնական գործոնը հանդիսանում է բրիկետների մեխանիկական ամրությունը:

Պողպատե տաշեղից պատրաստված բրիկետները, որպես կանոն, պետք է մամլված լինեն մինչև 4,3—5 կգ/դմ³ խտության սահմաններում, իսկ շուգունե տաշեղից պատրաստվածները՝ 5,5—6 կգ/դմ³ սահմաններում: Պարզվել է,

որ բրիկետների ամրությունը կախված է շուգունե տաշեղի տարրերի կոշտության և խոշորության համասեռությունից: Տարասեռ տաշեղի մամլման դեպքում, մյուս հավասար պայմաններում, խտությունը նվազում է:



Նկ. 1. Բրիկետի խտության կախումը բրիկետի բարձրությունից (կբ շուգունե փափուկ տաշեղի համար տեսակարար ճնշումը 3,2 տ/սմ² է):

Բացի նշված գործոնից, բրիկետների խտության վրա ազդում է նաև նրանց բարձրությունը: Դիագրամից (նկ. 1) երևում է, որ 3,2 տ/սմ² միևնույն տեսակարար ճիգի դեպքում համասեռ տաշեղից մամլված բրիկետների խտությունը հակադարձ համեմատական է նրանց բարձրությանը:

Նշված երևույթը բացատրվում է մամլման ընթացքում տաշեղի առանձին մասնիկների և տաշեղի ու մամլակաղապարի միջև առաջացող շփման ուժերի առաջացմամբ: Եփման ուժերը մեծանում են բրիկետի H.D հարաբերությանը և բրիկետացման ուժին համեմատական կերպով, այսինքն՝ գոյություն ունի հետևյալ կախումը.

$$P_{r,r} = \frac{HP_{r,r}}{D}$$

որտեղ՝ $P_{r,r}$ -ն շինման ուժն է:

H-ը՝ բրիկետների բարձրությունը տվյալ պահին,


D-ն՝ բրիկետի (մամլակաղապարի) տրամագիծը,

$P_{r,r}$ -ն՝ բրիկետացման տեսակարար ճիշդ:

$\frac{H}{D}$ հարաբերությունը փոխարինելով K գործակցով,

կստանանք՝ $P_{r,r} = K \cdot P_{r,r}$:

Այսպիսով, հաստատուն ճնշման դեպքում K գործակցի մեծանալու հետ բրիկետների խտությունը կակսի իջնել և, ընդհակառակն, K-ի մեծության պակասելու դեպքում խտությունը կաճի:



Նկ. 2. Չուգունե տաշեղից պատրաստված բրիկետների ձուլանվազման կախումը բրիկետների խտություններից, վազրանկայում վերահանելու ժամանակ:

Սակայն գոյություն ունի մի որոշակի սահման, որից ավելի ցած H արժեքի պակասեցումը չի ազդում բրիկետի խտության հետագա ավելացման վրա: Տվյալ դեպքում այդ սահմանը հանդիսացել է բրիկետի 35 մմ բարձրությունը:

Տաշեղի օգտագործման դեպքում մետաղի ձուլանվազումը կախված է բրիկետի խտությունից: Դիագրամի վրա (Նկ. 2) ցույց է տրված վազրանկայում վերահանելու ժամանակ չուգունե տաշեղից պատրաստված բրիկետների ձուլանը-

վազման մեծություն կախումը նրանց խտությունից:

Այդ դիագրամից հետևում է, որ բրիկետների խտության (ծավալային կշռի) իջեցման հետ մետաղի ձուլանվազումը խիստ աճում է, իսկ իրար վրա լցրած տաշեղի վերահանման ժամանակ ձուլանվազումը հասնում է 30 %-ի և ավելի: Չուլանվազման կախումը բրիկետների խտությունից ցույց է տրված 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

Հալումների ճնշ	Բրիկետների խտությունը կգ/զմ ³	Չուլանվազումը 10-ով
1	4,7-ից մինչև 5,2	12,5-ից մինչև 15
2	5,7-ից մինչև 5,9	6,0-ից մինչև 6,5

II. Վառարանի հորանի մեջ շնեկավոր մեխանիզմի օգնությամբ մատուցելու միջոցով վազրանկայում շրիկետացված տաշեղի օգտագործման եղանակ:


Վերջին մի քանի տարիների ընթացքում, ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ արտասահմանում (Անգլիա, ԱՄՆ և այլն) սկսել են լայնորեն կիրառել հատուկ պնևմատիկ և մեխանիկական հարմարանքներ, որոնք կառուցված են վազրանկայի պատյանին կից: Նրանք հնարավորություն են տալիս առանց հատուկ կապիտալ ներդրումների, առանց մետաղի քիմիական բաղադրություն կորուստների և փոփոխումների, վազրանկաներում իրականացնել տաշեղի վերահանումը՝ սառը և տաք օդափչումով:

Անգլիական և ամերիկյան պրակտիկայում թավական մեծ կիրառություն ստացած հարմարանքը (Նկ. 3) կազմված է լցնող փոքր ձագարից, որտեղ բեռնվում է տաշեղը՝ առանց որևէ նախնական մշակման: Այնուհետև խողովակով (4) նա մտնում է հարմարանքի (3) մեջ և պնևմատիկ սանրածև հրիչի (5) օգնությամբ մատուցվում անթթվածնային գոտուն (հալման գոտուց մի փոքր ավելի բարձր), որտեղ տեղի է ունենում տաշեղի արագ հալումը ավելի քիչ ձուլանվազումով: Գործնականորեն պարզվել է, որ անթթված-

նային գոտին գտնվում է անմիջապես երեսվածքի ալյուրեի գոտու վերևը: 3-րդ նկարում ցույց է տրված տաշեղի՝ դեպի անթթվածնային գոտի մատուցման սխեման: Ալյուման գոտու փոփոխման դեպքում հարմարանքը տեղադրվում է մեջտեղում, երեսվածքի ալյուման ամենամեծ և ամենափոքր բարձրության մեջ:

Մեր հայրենական պրակտիկայում վագրանկայում շրթկետացված մետաղե տաշեղի օգտագործման հարցը լուծվել է ավելի հաջող և ուսցիտնալ կերպով:

Արտասահմանյան պրակտիկայում գոյություն ունեցող հարմարանքները (նկ. 3) կառուցված են



Նկ. 3. Վագրանկայի անթթվածնային գոտու մեջ տաշեղի մատուցման սխեման: 1. Յուրմ, 2. Երեսվածքի ալյուրե, 3. Տաշեղ մտցնելու հարմարանք, 4. Չափարից սկսվող խողովակ՝ կոլաշեկի վրա, 5. Հրել, 6. Հալման զտի, 7. Տաշեղի մատուցման զտի:

վառարանի երեսվածքի նկատմամբ որոշ անկյան տակ, և տաշեղի մատուցման համար երեսվածքի անցքը հանդիսանում է հարմարանքի գլանաձև մասի շարունակությունը: Մատուցման այսպիսի միաստիճանի եղանակով փխրունացած տաշեղը անմիջապես ընկնում է վագրանկայի հորանը, որտեղ ենթարկվում է օքսիդացման և ձուլանվազման:


Տաշեղի շնեկավոր մատուցում ունեցող հարմարանքները, որոնք իրականացվել են հայրենական մի շարք գործարաններում («Օկույարը» — Կրասնոդար, «Ուրալ ԶիՍ» ավտոգործարան, «Կրասնի դվիզատեղ» — Սամարղանդ, Կիևի Լեպսեի անվան գործարան, Ստալինի անվան գործարան — Կրասնոդար, մեխգործարան — Կուրսկ, «Գլավտորմաշ» գործարան — Խարկով, մետալուրգիական սարքավորման գործարան — Դնեպրոպետրովսկ և այլն) իրենց կոնստրուկցիաներով զգալի չափով ավելի պարզ են և հուսալի՝ շահագործման պայմաններում:

Ի տարբերություն արտասահմանյան հարմարանքների, նրանք պատրաստված են խիստ հորիզոնական դասավորված շնեկավոր մեխանիզմների ձևով, որոնք ռենն վագրանկայի համան գոտուն տաշեղի երկաստիճանի մատուցում, այսինքն՝ շնեկի առջևի երեսվածքի անցքն (1-ին աստիճան) ունի դանի ձև, իսկ ներսինը (2-րդ աստիճան)՝ հատած կոնի ձև, որի լայն հիմքը դարձված է դեպի վագրանկայի ներսը, և կամ թե հատած ըտրգի ձև, որի հիմքը վագրանկա մտնելիս 160×160 մմ չափի է:

Այս ձևով մատուցված տաշեղը, մինչև համան գոտին ընկնելը, կարողանում է եռակալվել և ընկնում է հարման գոտին եռակալված կտորների ձևով, որն ապահովում է մետաղի ավելի քիչ օքսիդացումը:

4 և 5 նկարներում բերված են երկու շնեկավոր մեխանիզմների տեղադրման սխեման՝ 950 մմ տրամագիծ ունեցող վագրանկայի հորանին շուգունե տաշեղ մատուցելու համար և Կրասնոդարի «Օկույարը» գործարանի շնեկավոր մեխանիզմը:

Նշված գործարանը, երկու միատիպ՝ 950 մմ տրամագիծով և 6,5 տ/ժամ արտադրողականությանը վագրանկաների դեպքում, որոնք սարքավորված են տրամագծորեն հակադիր դասավորված երկու շնեկավոր հարմարանքներով, 3 տարվա ընթացքում (1951—53 թթ.) վերահալել է 3028 տոննա տաշեղ և տնտեսել 859,7 հազ. ռուբլի (տե՛ս աղյուսակ 2): Այդ նույն ժամանակաշրջանում տնտեսվել է 300 տ կոքս, իսկ 3 տարվա ընթացքում ընդհանուր տնտեսումը կազմել է 980 հազ. ռուբլի:



Նկ. 4. Նրկու շնեկավոր մեխանիզմների տեղակայման սխեման՝ չուգունն տաշելը վազրանկային մատուցելու համար:

Ա Ղ Յ Ո Ս Ա Կ 2

Տարեթիվերը	Վերահսկված տաշելի քանակը տոննաներով	Ձարդուկի և տաշելի արժեքների տարբերությունը հազ. հոս.բ.	Միջին ջերմաստիճանը հունի վրա °C	Տաշելի 0/10-ը մետազարկումը
1951	606	192,7	1390—1430	8,1
1952	1222	327,0	»	8,1
1953	1200	340,0	»	8,3

Ընդամենը՝ 3028	859,7			
----------------	-------	--	--	--

Այս նույն գործարանում միևնույն վազրանկայում կատարվել են համեմատական հալումներ տաշելով և առանց տաշելի:

Հալումների արդյունքները բերված են 3-րդ աղյուսակում:

Վազրանկայում մետաղն տաշելի օգտագործման այս կամ այն հղանակի էֆեկտիվությունն ու նպատակահարմարությունը որոշելու համար կատարենք բրիկետների մեկ տոննային ընկնող ծախսերի և շնեկավոր մեխանիզմների կիրառություն հետ կապված ծախսերի տեխնիկա-տնտեսական հաշվարկը, որ տրված է 4-րդ աղյուսակում:

Հալումներ	Չուլանվա- զում % ¹⁰ -ով		Սծմբի պարու- նակութունը % ¹⁰ -ով	Մեծագի բնից ա- նուր ձուլված զուտը % ¹⁰ -ով	ձուր միջին զեր- մաստի հասցը °C	Կարծրութունը H _B	Մետաղի քիմիական բաղադրութունը % ¹⁰ -ով			
	Si	Mn					C ընդհ.	Si	Mn	S
Հալում տաշեղով	10—12	15—19	0,12	5,93	1410	197	3,25—3,24	0,85—0,96	0,85—0,96	0,12
Հալում առանց տաշեղի	10—12	15—18	0,12	5,98	1410	197	3,39—3,42	2,00—2,02	0,78—0,84	0,117

Բրիկետացման և շենկավար հարմարանքի միջոցով մետալուրգիական տաշեղի վերամշակման արժեքը (1953 թ. գեներով)

Գործարաններ և նախա- գծային կազմակերպու- թյուններ	Տեղակայված սարքավորում		Մեկ տոննա տաշեղի վերամշակման արժեքը ռուբլիներով
	Ջարդիչներ	Բրիկետացման մամլիչներ	
Ա. Գործարաններ՝ Մոսկվայի ավտոգործա- րան ՋԻՀ	Մուրճային	Հիդրավլիկական 350 տ, արտադրո- ղականութունը 3,5 տ/ժամ	67
Կրասնոդարի գործարան	Շենկավոր հարմարանք՝ վազբանային տաշեղ մատուցելու համար	—	18
Բ. Նախագծային կազմա- կերպութուններ՝ Ֆիզրավտոտրակտոր- պրոմ	Կոնային «ՍԲ—25»	Հիդրավլիկական 350 տ, արտադրո- ղականութունը 3,5 տ/ժամ	67
Գիգրոստանոկ	Մուրճային	Նույնը	54
»	»	Հիդրավլիկական 350 տ, արտադրո- ղականութունը 0,5 տ/ժամ	56

Պարզվել է, որ 1 տ բրիկետի վերամշակման ծախսումները բաշխվում են հետևյալ կերպ՝ հավաքումը և տեսակավորումը կազմում է 52 տոկոս, ջարդումը (պողպատի տաշեղ)՝ 33% և բրիկետացումը՝ 15%:

Մոտավոր և համեմատական հաշվարկի հա-
մար վերցնում ենք շուգումն տաշեղ:

1. Չուգունն տաշեղից ստացված մեկ տոննա
բրիկետի արժեքը հետևյալն է.

ա) Գլավտորչտմետի տվյալների համաձայն

1 տ շուգունն տաշեղի արժեքը կազմում է 54
ռուբլի:

բ) 1 տ տաշեղի վերամշակման և բրիկետաց-
ման ծախսերը (աղյուսակ 4) կլինեն 61 ռուբլի:
Ուրեմն՝ 1 տ բրիկետի ընդհանուր արժեքը
կկազմի 54 + 61 = 115 ռ.:

Եթե 1 տ շուգունն ջարդուկի միջին արժեքը
ընդունենք 330 ռ, ապա 1 տ բրիկետի արժեքի
տնտեսումը կկազմի 320—115 = 205 ռուբլի:

Միջամամանակ, անհրաժեշտ է նկատի ունե-
նալ հետևյալ ծախսերը՝

ա) 0,5 տ/ժամ արտադրողականությունը «ՔԱՄ» տիպի բրիկետ-մամլիչի զնման և տեղադրման ծախսերը, առնվազն 125 հազար ռուբլի:

բ) շենքի արժեքը (1 մ³-ի համար՝ 80 ռուբլի, պահանջվող տարեկանությունը՝ 90 մ³, երբ բարձրությունը 10 մ է). $90 \times 10 \times 80 = 72$ հազ. ռուբլի:

2. Քննարկենք այն դեպքը, երբ վազրանկալում չուզում են տաշելի օգտագործումը կատարվում է շենքի ներքին օգնությունը մատուցելու միջոցով:

ա) 1 տ չուզում են տաշելի արժեքը նույնն է, ինչ որ առաջին դեպքում՝ 54 ռուբլի:

բ) 1 տ տաշելի վերամշակման ծախսերը կազմում են (աղյուսակ 4) 18 ռուբլի:

Ընդհանուր գումարը կկազմի $54 + 18 = 72$ ռուբլի: Ընդունելով մեկ տոննա չուզում են ջարդուկի արժեքը 320 ռուբլի, մեկ տոննա վերահալած տաշելի արժեքի տնտեսումը կկազմի՝

$$320 - 72 = 248 \text{ ռուբլի:}$$

Մեկ վազրանկայի համար երկու շենկավոր հարմարանքների պատրաստման և տեղադրման ծախսերը կազմում են 6-ից մինչև 8 հազար ռուբլի: Այդ հարմարանքները կարող են պատրաստվել յուրաքանչյուր մետաղամշակման գործարանում:

Համանման ձևով կարելի է հաշվել պողպատի տաշելի օգտագործման ժամանակ ստացվող տրնտեսական էֆեկտը: Այդ դեպքում տնտեսված 248 ռ. դումարի մեջ չի մտնում կոքսի ծախսի իջեցումից ստացված տնտեսումը: Այժմ ցույց տանք, թե նշված միջոցառումից ինչպիսի՞ տնտեսում կըստանանք մեր ռեսպուբլիկան անցած՝ 1957 թվականի ընթացքում:

Հնարավորություն չունենալով որոշելու տրնտեսման չափը ամբողջ ռեսպուբլիկայում, մենք կսահմանափակվենք Իրևանի երեք գործարաններով (Հայէլեկտրագործարան, Կոմպրետրների գործարան և փոքր հիդրոտուրբինների գործարան):

Եթե ընդունենք, որ 1957 թվականին նշված գործարաններում պողպատե և չուզում են տաշելի հանձնումը կազմել է 3665 տոննա, որոնցից մոտավորապես 70%-ը կամ 2565 տոննա կալմում է չուզում են տաշելը, ապա հաշվարկի համաձայն, եթե թվարկած գործարաններում վազրանկաներն ունենան շենկավոր հարմարանքներ և, հետևապես, տաշելը վերահալեցվի այդ նդահակով, ապա մեր ռեսպուբլիկան առանց հատուկ

ծախսումների կստանար միաժամ մետաղի տնտեսում, չհաշված կոքսի և տրանսպորտային ծախսերի տնտեսումը:

$$2565 \times 248 = 636,12 \text{ հազար ռուբլի:}$$

Այսպիսով, բերված դիագրամներից, աղյուսակներից և հաշվարկումներից մենք կարող ենք գալ այն եզրակացություն, որ վազրանկային պրոցեսում չբրիկետացված մետաղյա տաշելի օգտագործման եղանակը տաշելը շենկավոր մեխանիզմներով դեպի հալման գոտին մատուցելու միջոցով, ձուլման տեխնիկայի զարգացման սովյալ էտապում, տեխնիկա-տնտեսական տեսակետից հանդիսանում է ամենապրոգրեսիվ, ուստի նալ և նպատակահարմար եղանակը:

Տաշելի վերահալման նշված մեթոդը լրացուցիչ տարածություններ և հատուկ թանկարժեք սարքավորում չի պահանջում: Դրա հետ միասին նա տալիս է վերահալեցվող չուզումների բարձր որակ, պակասեցնում է կոքսի ծախսը, բարձրացնում է վազրանկայի արտադրողականությունը: Հալման համար տաշելի նախապատրաստումը բանվորական ուժի լրացուցիչ ծախսումներ չի պահանջում և կարող է կիրառվել ամեն մի գործարանում, որտեղ գոյություն ունի ձուլման ցեխ:

Վազրանկայում չուզումների վերահալման սովյալ մեթոդի լայն կիրառումը պետությունը կտա ոչ միայն աչքի ընկնող տնտեսում, այլև երկաթուղային տրանսպորտը կազատի ավելորդ փոխադրումներից:

Գ Ր Ա Վ Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. А. Ф. Ланда, «Использование стружки без брикетирования при плавке в вагранке». Экономия материалов в литейном производстве. Сборник статей, Машиз, М., 1953.
2. А. М. Беляевский, М. Н. Кудрин, «Рациональное использование стружки и других отходов черных и цветных металлов» (сборник статей), Машиз, М., 1956.
3. Р. А. Миних, Н. Д. Кудрячий и М. Г. Бездольный, «Вагранки для переплавки стружки без брикетирования», ЦВТИ тракт. и сельхоз. машиностроения, М., 1957.
3. Л. М. Краснов, Бюллетень № 24, Центральный институт информации, М., 1957.
5. С. Х. Кробоқ, «Плавка стружки в вагранке». Некоторые актуальные вопросы литейного производства, ЦВТИ ТИСМ, М., 1957.